Հավելված 6
«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -20/8 » * ծածկագրով
գնանշման հարցումի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -20/8-1

ք.Վանաձոր 10.02.2020թ.

«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ -ն ի դեմս տնօրեն Վ.Մկրտչյան-ի, որը գործում է ք.Վանաձոր , Գ. Նժդեհի փողոց 2/42 -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Նատալի Ֆարմ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ Ա.Ասատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից

ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փո պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չ ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջա ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 15 247 947 /տասնհինգ միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար իննը հարյուր քառասունյոթ / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2031]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնումստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ.[22] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

աստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

[2]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[233]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար

---

[22] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.*[23]
Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կո պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխար համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությա սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումներ նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42 <ՀայԲիզնեսբանկ>Վանաձոր մ/ղ Հ/Հ 1150004484110100 ՀՎՀՀ 06945592 Տնօրեն Գ.Մկրտչյան Կ.Տ ստորագրություն Կ.Տ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ.2/2 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570005065330100 ՀՎՀՀ 01222567 Տնօրեն՝ Ա.Ավագյան _____ /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

« 10 » 02 2020 թ.
ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/8-1 ծածկագրով պայմանա

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	33691176	Գլիցերին 1,1 գր	մոմիկ ուղիղաղիքային 1,1գ	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս	հատ	95	66500	700	Գ.Նաժդեհի 2/42	700	Փետրվար-դեկտեմբերի 25
2	33691176	Գլիցերին 2,1 գր	մոմիկ ուղիղաղիքային 2.11գ	Նիժֆարմ ԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, ԳՍՊ-459,	հատ	95,68	95680	1000	Գ.Նաժդեհի 2/42	1000	Փետրվար-դեկտեմբերի 25
11	33621270	Մենթոլ, իզովալերաթթվի մենթիլ էսթեր 60 մգ	Մենթոլ, իզովալերաթթվի մենթիլ էսթեր դեղահատեր 60 մգ	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, 02093, Կիև, Բորիսպ	հաբ	8,1	17010	2100	Գ.Նաժդեհի 2/42	2100	Փետրվար-դեկտեմբերի 25
18	33621620	Սպիրոնոլակտոն 25 մգ	Սպիրոնոլակտոն դեղահատ 25 մգ	Ռեմեդիկա ՍՊԸ, Լիմասոլ Ինդուստրիալ Իստեյտ, Ահարնոն փ.,	հաբ	35,3	310640	8800	Գ.Նաժդեհի 2/42	8800	Փետրվար-դեկտեմբերի 25

				3056 Լիմասոլ¶							
20	33621750	Նիֆեդիպին 10 մգ	Նիֆեդիպին դեղահատ թաղանթապատ 10 մգ	Տեխնոլոգ ՓԲԸ, Մանուիլսկոգո փ. 8, 20300 Ուման, Չերկասի շրջան	հաբ	13,71	12339	900	Գ.Նաժդեհի 2/42	900	Փետրվար-դեկտեմբերի 25
22	33631230	Բետադին 200 մգ	մոմիկ հեշտոցային 200մգ	Ալկալոիդ ԱԴ- Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12	հատ	119	123760	1040	Գ.Նաժդեհի 2/42	1040	Փետրվար-դեկտեմբերի 25
24	33631310	Դիկլոֆենակ նատիում , լիդոկաին 2 մլ	Դիկլոֆենակ նատիում , լիդոկաին 2 մլ	Լիկվոր ՓԲԸ	սրվ	դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում), լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) diclofenac (diclofenac sodium), lidocaine 453,6	45360	100	Գ.Նաժդեհի 2/42	100	Փետրվար-դեկտեմբերի 25
26	33641200	Միզոպրոստոլ 200 մգ	Միզոպրոստոլ դեղահատ 200մկգ	Պիրամալ Հելթքեյր ՄԹ Լիմիտեդ	հաբ	181	271500	1500	Գ.Նաժդեհի 2/42	1500	Փետրվար-դեկտեմբերի 25
27	33642210	Պրեդնիզոլոն 5մգ	Պրեդնիզոլոն դեղահատ 5 մգ	Բելմեդպրեպա-ռատի ՀՈՒՋ (220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս փ.,	հաբ	7	5950	850	Գ.Նաժդեհի 2/42	850	Փետրվար-դեկտեմբերի 25
28	33642220	Մետիլպրեդնիզոլոն 4 մգ	Մետիլպրեդնիզոլոն 4 մգ դեղահաբեր	Օրիոն Քորպորեյշն, Օրիոնինտի 1, 02200 Էսպոո	հաբ	68	40800	600	Գ.Նաժդեհի 2/42	600	Փետրվար-դեկտեմբերի 25
47	33661122	Պարացետամոլ 80 մգ	մոմիկներ ուղիղաղիքային 80մգ	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ	հատ	46,1	59930	1300	Գ.Նաժդեհի 2/42	1300	Փետրվար-դեկտեմբերի 25
48	33661156	Թիմոլոլ 5մգ/մլ 5մլ	Թիմոլոլ ակնակաթիլներ 5մգ/մլ5մլ	Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ	հատ	400	14400	36	Գ.Նաժդեհի 2/42	36	Փետրվար-դեկտեմբերի 25
50	33671116	Քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ 0,05%-10 մլ	Քսիլոմետազոլին հիդրոքլորիդ քթակաթիլներ 0,05 % 10մ	Արսանիտ ՍՊԸ, ք. Մասիս, Երևանյան 110՝ բաց թողնման հ	հատ	352,8	49392	140	Գ.Նաժդեհի 2/42	140	Փետրվար-դեկտեմբերի 25
56	33691189	Բետահիստինի դիհիդրոքլորիդ 24 մգ	Բետահիստինի հիդրոքլորիդ դեղահատեր 24մգ	Մեդանա Ֆարմա ԲԸ, 98-200 Սիերադզ Վ. Լոկիետկա 10, Լեհաստան	հաբ	65	78000	1200	Գ.Նաժդեհի 2/42	1200	Փետրվար-դեկտեմբերի 25

57	33691222	Ցինարիզին 25 մգ	Ցինարիզին դեղահատ 25մգ	Սոֆարմա ԲԸ	հաբ	5,11	49056	9600	Գ.Նաժդեհի 2/42	9600	Փետ դեկտեմբ
60	33141166	Հեպարին 25 գ քսուկ	Հեպարին 25 գ քսուկ	Նիժֆարմ ԲԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, ԳՍՊ-459, Ս	հատ	624,9	149973,6	240	Գ.Նաժդեհի 2/42	240	Փետրվար-դեկտեմբերի 25
61	33621480	Պերինդոպրիլ , բիսոպրոլոլ ֆումարատ 5մգ/5մգ	Պերինդոպրիլ , բիսոպրոլոլ ֆումարատ 5մգ/5մգ դեղահաբ	Լես Լաբորատոիրես Սերվիե Ինդուստրի, 905, Սարան ճ., 45520 Ժիդի	հաբ	119	142800	1200	Գ.Նաժդեհի 2/42	1200	Փետրվար-դեկտեմբերի 25
62	33621764	Պերինդոպրիլ ,ամլոդիպին, ինդապամիդ 8մգ/5մգ/2,5 մգ	Պերինդոպրիլ ,ամլոդիպին, ինդապամիդ 8մգ/5մգ/2,5 մգ դեղահաբ	ԿՈԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո	հաբ	145	174000	1200	Գ.Նաժդեհի 2/42	1200	Փետրվար-դեկտեմբերի 25
63	33621764	Պերինդոպրիլի տրեբուտիլամինային աղ , ինդապամիդ 4մգ/1,25մգ	Պերինդոպրիլի տրեբուտիլամինայ ին աղ , ինդապամիդ 4մգ/1,25մգ դեղահաբ	ԿՈԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո	հաբ	61	43920	720	Գ.Նաժդեհի 2/42	720	Փետրվար-դեկտեմբերի 25
64	33621764	Պերինդոպրիլ ,ամլոդիպին, ինդապամիդ 8մգ/10մգ/2,5 մգ	Պերինդոպրիլ ,ամլոդիպին, ինդապամիդ 8մգ/10մգ/2,5 մգ դեղահաբ	ԿՈԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո	հաբ	146,5	73250	500	Գ.Նաժդեհի 2/42	500	Փետրվար-դեկտեմբերի 25
65	33631310	Դիկլոֆենակ 1%-50,0 դոնդող	Դիկլոֆենակ 1%-50,0 դոնդող	Զդորովյե Դեղագործական Ընկերություն ՍՊԸ	հատ	375,8	26306	70	Գ.Նաժդեհի 2/42	70	Փետրվար-դեկտեմբերի 25
67	33641210	Միֆեպրիստոն 200 մգ	Միֆեպրիստոն 200 մգ դեղահաբ	«Օբնինսկի Քիմիադեղագործա-կան Ընկերություն» ՓԲԸ	հաբ	6772	338577,5	50	Գ.Նաժդեհի 2/42	50	Փետրվար-դեկտեմբերի 25
69	33651134	Ցիպրոֆլոքսացին 500 մգ	Ցիպրոֆլոքսացին դեղահատ թաղանթապատ, 500մգ	"Բորիսովյան բուժպատրաս-տուկների գործարան" ԲԲԸ	հաբ	34,33	99557	2900	Գ.Նաժդեհի 2/42	2900	Փետրվար-դեկտեմբերի 25
70	33651149	Նիստատին 0,5	Նիստատին դեղահատ թաղանթապատ	«Բորիսովյան բուժպատրաստու-կների գործա	հաբ	12,98	7788	600	Գ.Նաժդեհի 2/42	600	Փետրվար-դեկտեմբերի 25

			500000 ՄՄ								
82	33651248	Օքսալիպլատին 100 մգ.20մլ	Օքսալիպլատին 100 մգ. 20 մլ լուծույթ ինֆուզիոն ներարկման համար	ԷԲԵՎԵ Ֆարմա Գես.մ.բ.Հ. Նֆգ. ԿԳ	ֆլ	38070	2284224	60	Գ.Նաժդեհի 2/42	60	Փետրվար-դեկտեմբերի 25
83	33661153	Դեքսամեթազոն 1մգ/մլ10 մլ	Դեքսամեթազոն ակնակաթիլներ 1մգ/մլ10մլ	Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ., Իլֆով, 075100 Օտոպե	հատ	510	77010	151	Գ.Նաժդեհի 2/42	151	Փետրվար-դեկտեմբերի 25
86	33691176	Իպիդակրինի հիդրոքլորիդ 15մգ/մլ	Իպիդակրինի հիդրոքլորիդ լուծույթ ներարկման 15մգ/1 մլ	ՀԲՄ Ֆարմա ս.ռ.օ., Սկլաբինսկա 30, 03680, Մարտին	սրվ	835	4049750	4850	Գ.Նաժդեհի 2/42	4850	Փետրվար-դեկտեմբերի 25
87	33691176	Պանտոպրազոլ 40 մգ	Պանտոպրազոլ դեղահատեր աղելույծ 40 մգ	ԿՈԿԱ դ.դ.	հաբ	61,9	148560	2400	Գ.Նաժդեհի 2/42	2400	Փետրվար-դեկտեմբերի 25
89	33691176	Էշոլցիա, ալոճենի, մագնեզիումի ծանր օքսիդ 20մգ+75մգ+124,35մգ	Էշոլցիա, ալոճենի, մագնեզիումի ծանր օքսիդ դեղահատեր թաղանթապատ 20մգ+75մգ+124.35 մգ	Ինոտերա Շուզի, Ռու Ռենե Շանտերո «Լիլ Վերտ»	հաբ	51	489600	9600	Գ.Նաժդեհի 2/42	9600	Փետրվար-դեկտեմբերի 25
90	33691176	Տորասեմիդ 10 մգ	Տորասեմիդ դեղահատ 10մգ	Բեռլի խեմի	հաբ	66	79200	1200	Գ.Նաժդեհի 2/42	1200	Փետրվար-դեկտեմբերի 25
91	33691176	Պենտօքսիֆիլին 400 մգ	Պենտօքսիֆիլին դեղահատ 400մգ	Ավենտիս Ֆարմա Լիմիտեդ	հաբ	99	118800	1200	Գ.Նաժդեհի 2/42	1200	Փետրվար-դեկտեմբերի 25
93	33691176	Ինդոմետացին 10%-40 գ	Ինդոմետացին 10%-40 գ քսուկ	«Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ	հատ	313,4	21937,3	70	Գ.Նաժդեհի 2/42	70	Փետրվար-դեկտեմբերի 25
95	33691170	Յոհեքսոլ 350մգ/մլ	Յոհեքսոլ 350մգ/մլ -50 մլ լուծույթ ներարկման ռենտգենոկոնտրաստ նյութ	ԳԵ Հելթքեյր Իռլանդիա, ԻԴԱ Բիզնես Պարկ, Կարիգտոհիլ Քո. Կորկ	ֆլ	5450	4954050	909	Գ.Նաժդեհի 2/42	909	Փետրվար-դեկտեմբերի 25
97	33691176	Կլեմաստին 1մգ	Կլեմաստին դեղահատեր 1մգ	Ֆամար Իտալիա Ս.պ.Ա.	հաբ	62,99	37794	600	Գ.Նաժդեհի 2/42	600	Փետրվար-դեկտեմբերի 25
100	33691210	Ուաբային 0,25մգ.	Ուաբային լուծույթ	Դեղագործական	սրվ	44,1	5733	130	Գ.Նաժդեհի	130	Փետրվ

		1մլ	ներարկման 0,25մգ/մլ, 1մլ	Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ					2/42		
105	33691500	Տրանեքսամաթթու 500մգ	Տրանեքսամաթթու դեղահատեր թաղանթապատ 500մգ	Օբնինսկի Քիմիադեղագործական Ընկերություն ՓԲԸ	հաբ	366,7	146660	400	Գ.Նաժդեհի 2/42	400	Փետրվար-դեկտեմբերի 25
106	33691500	Տրանեքսամաթթու 50մգ/5մլ	Տրանեքսամաթթու 50մգ/5մլ	"Մոսկվայի էնդոկրինային գործարան ՖՊՈՒՉ"	սրվ	1657	414195	250	Գ.Նաժդեհի 2/42	250	Փետրվար-դեկտեմբերի 25
107	33691811	Բիսակոդիլ 10գ	մոմիկներ ուղիղաղիքային 10գ	Լեկխիմ-Խարկով ԲԸ, 36, 17-րդ Պարտսյեզդա փ., 61115 Խ	հատ	49,32	107024,4	2170	Գ.Նաժդեհի 2/42	2170	Փետրվար-դեկտեմբերի 25
108	33691813	Թեոֆիլին 200 մգ	Թեոֆիլին 200մգ դեղապատիճներ	ԿՈԿԱ դ.դ., Նովո մեստո	հաբ	28,2	16920	600	Գ.Նաժդեհի 2/42	600	Փետրվար-դեկտեմբերի 25

Ծանոթություն

ա. 2,5 տարվանից ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերի հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանելիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերի հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:
դ. հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:

Հրավերում նախատեսված է առավելագույն քանակներ:

Մատակարարումը կատարվելու է ըստ ներկայացված պատվերի աշխատանքային օրերի ժամը 9.00-16.00

ԳՆՈՐԴ

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42
<ՀայԲիզնեսբանկ>Վանաձոր մ/ղ

Հ/Հ 1150004484110100
ՀՎՀՀ 06945592
Տնօրեն՝ Վ.Մկրտչյան
Կ.Տ
ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ.2/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Սասունյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
« 10 » 02 2020 թ. կնքված
ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/8 -1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33691176	Գլիցերին 1,1 գր	%	%	6650	13300	19950	26600	33250	39900	46550	53200	59850	66500	66500
2	33691176	Գլիցերին 2,1 գր	%	%	9568	19136	28704	38272	47840	57408	66976	76544	86112	95680	95680
11	33621270	Մենթոլ, իզովալերաթթվի մենթիլ էսթեր 60 մգ	%	%	1701	3402	5103	6804	8505	10206	11907	13608	15309	17010	17010
18	33621620	Սպիրոնոլակտոն 25 մգ	%	%	31064	62128	93192	124256	155320	186384	217448	248512	279576	310640	310640
20	33621750	Նիֆեդիպին 10 մգ	%	%	1234	2468	3702	4936	6170	7403	8637	9871	11105	12339	12339

22	33631230	Բետադին 200 մգ	%	%	12376	24752	37128	49504	61880	74256	86632	99008	111384	123760	123760
24	33631310	Դիկլոֆենակ նատիում , լիդոկաին 2 մլ	%	%	4536	9072	13608	18144	22680	27216	31752	36288	40824	45360	45360
26	33641200	Միզոպրոստոլ 200 մգ	%	%	27150	54300	81450	108600	135750	162900	190050	217200	244350	271500	271500
27	33642210	Պրեդնիզոլոն 5մգ	%	%	595	1190	1785	2380	2975	3570	4165	4760	5355	5950	5950
28	33642220	Մետիլպրեդնիզոլոն 4 մգ	%	%	4080	8160	12240	16320	20400	24480	28560	32640	36720	40800	40800
47	33661122	Պարացետամոլ 80 մգ	%	%	5993	11986	17979	23972	29965	35958	41951	47944	53937	59930	59930
48	33661156	Թիմոլոլ 5մգ/մլ,5մլ	%	%	1440	2880	4320	5760	7200	8640	10080	11520	12960	14400	14400
50	33671116	Քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ 0,05%-10 մլ	%	%	4939	9878	14818	19757	24696	29635	34574	39514	44453	49392	49392
56	33691189	Բետահիստինի դիհիդրոքլորիդ 24 մգ	%	%	7800	15600	23400	31200	39000	46800	54600	62400	70200	78000	78000
57	33691222	Ցինարիզին 25 մգ	%	%	4906	9811	14717	19622	24528	29434	34339	39245	44150	49056	49056
60	33141166	Հեպարին 25 գ քսուկ	%	%	14997	29995	44992	59989	74987	89984	104982	119979	134976	149974	149973,6
61	33621480	Պերինդոպրիլ , բիսոպրոլոլ ֆումարատ 5մգ/5մգ	%	%	14280	28560	42840	57120	71400	85680	99960	114240	128520	142800	142800
62	33621764	Պերինդոպրիլ ,ամլոդիպին, ինդապամիդ 8մգ/5մգ/2,5 մգ	%	%	17400	34800	52200	69600	87000	104400	121800	139200	156600	174000	174000
63	33621764	Պերինդոպրիլի տրեբուտիլամինային աղ ,			4392	8784	13176	17568	21960	26352	30744	35136	39528	43920	

		ինդապամիդ 4մգ/1,25մգ	%	%											
64	33621764	Պերինդոպրիլ ,ամլոդիպին, ինդապամիդ 8մգ/10մգ/2,5 մգ	%	%	7325	14650	21975	29300	36625	43950	51275	58600	65925	73250	73250
65	33631310	Դիկլոֆենակ 1%-50,0 դոնդող	%	%	2631	5261	7892	10522	13153	15784	18414	21045	23675	26306	26306
67	33641210	Միֆեպրիստոն 200 մգ	%	%	33858	67716	101573	135431	169289	203147	237004	270862	304720	338578	338577,5
69	33651134	Ցիպրոֆլոքսացին 500 մգ	%	%	9956	19911	29867	39823	49779	59734	69690	79646	89601	99557	99557
70	33651149	Նիստատին 0,5	%	%	779	1558	2336	3115	3894	4673	5452	6230	7009	7788	7788
82	33651248	Օքսալիպլատին 100 մգ.20մլ	%	%	228422	456845	685267	913690	1142112	1370534	1598957	1827379	2055802	2284224	2284224
83	33661153	Դեքսամեթազոն 1մգ/մլ10 մլ	%	%	7701	15402	23103	30804	38505	46206	53907	61608	69309	77010	77010
86	33691176	Իպիդակրինի հիդրոքլորիդ 15մգ/մլ	%	%	404975	809950	1214925	1619900	2024875	2429850	2834825	3239800	3644775	4049750	4049750
87	33691176	Պանտոպրազոլ 40 մգ	%	%	14856	29712	44568	59424	74280	89136	103992	118848	133704	148560	148560
89	33691176	Էշոլցիա, ալոճենի, մագնեզիումի ծանր օքսիդ 20մգ+75մգ+124,35մգ	%	%	48960	97920	146880	195840	244800	293760	342720	391680	440640	489600	489600
90	33691176	Տորասեմիդ 10 մգ	%	%	7920	15840	23760	31680	39600	47520	55440	63360	71280	79200	79200
91	33691176	Պենտոքսիֆիլին 400 մգ	%	%	11880	23760	35640	47520	59400	71280	83160	95040	106920	118800	118800
93	33691176	Ինդոմետացին 10%-40 գ	%	%	2194	4387	6581	8775	10969	13162	15356	17550	19744	21937	21937,3

95	33691170	Յոհեքսոլ 350մգ/մլ	%	%	495405	990810	1486215	1981620	2477025	2972430	3467835	3963240	4458645	4954050	4954050
97	33691176	Կլեմաստին 1մգ	%	%	3779	7559	11338	15118	18897	22676	26456	30235	34015	37794	37794
100	33691210	Ուաբային 0,25մգ_1մլ	%	%	573	1147	1720	2293	2867	3440	4013	4586	5160	5733	5733
105	33691500	Տրանեքսամաթթու 500մգ	%	%	14666	29332	43998	58664	73330	87996	102662	117328	131994	146660	146660
106	33691500	Տրանեքսամաթթու 50մգ/5մլ	%	%	41420	82839	124259	165678	207098	248517	289937	331356	372776	414195	414195
107	33691811	Բիսակոդիլ 10գ	%	%	10702	21405	32107	42810	53512	64215	74917	85620	96322	107024	107024,4
108	33691813	Թեոֆիլին 200 մգ	%	%	1692	3384	5076	6768	8460	10152	11844	13536	15228	16920	16920

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** Իրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42
<ՀայԲիզնեսբանկ>Վանաձոր մ/ղ

Հ/Հ 1150004484110100
ՀՎՀՀ 06945592
Տնօրեն՝ Վ.Մկրտչյան
Կ.Տ
ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
Ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ.2/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Սաստրյան
/ստորագրություն/
Կ.Տ

01222567 «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» "НАТАЛИ ФАРМ" "NATALI FARM"